ԾԱՆՈՒՑՈՒՄ
2026 թվականի հունիսի 26-ին, ժամը 11:00-ին գումարվող «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին

Ընկերություն- «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերություն
Գտնվելու վայրի հասցե- ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության խորհրդի 2026 թվականի մայիսի 21-ի նիստում ընդունվել է թիվ 21/05/2026 որոշումը, որի համաձայն որոշվել է 2026 թվականի հունիսի 26-ին, ժամը 11:00-ին գումարել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով (**այսուհետ՝ նաև Ժողով**)՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2026 թվականի մայիսի 21-ի դրությամբ:

Ընկերության բաժնետերերի 2026 թվականի հունիսի 26-ին, ժամը 11:00-ին գումարվող տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ընկերությանը 100 տոկոս սեփականության իրավունքով պատկանող «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության և հաշվեկշռի հաստատում, շահույթի և վնասների հաստատում, աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:
- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում և անդամների ընտրություն:
- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2026թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի ընտրություն և հաստատում:
- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատում:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին կարելի է ծանոթանալ և ձեռք բերել երկուշաբթիից-ուրբաթ օրերին՝ 2026 թվականի մայիսի 22-ից մինչև հունիսի 25-ը ներառյալ՝ Ընկերության կադրերի բաժնում (ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում) ժամը 10:00-ից մինչև 15:00:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու համար բաժնետերը (*անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով*) կամ նրա կողմից լիազորված անձը (*լիազորությունները հաստատված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան*) պետք է 2026 թվականի հունիսի 26-ին ժամը 09:00-ից մինչև 10:45-ը գրանցվի ժողովի մասնակիցների գրանցամատյանում: Գրանցումից անմիջապես հետո կտրամադրվեն ժողովի օրակարգում ներառված հարցերի քվեաթերթիկները:

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ խորհուրդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀՎՀՀ 02800588 ԱՍԿԵ ԳՐՈՒՊ
ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
OPEN JOINT-STOCK COMPANY
ASCE GROUP
ASCE ГРУП